ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 27

05 ապրիլի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՖՐԱՆՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ 0.2 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 104 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով <<ՖՐԱՆՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազոր՝անձի 2021 թվականի մարտի 5-ի դիմումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձորակապ բնակավայրի տարածքում գտնվող, <<ՖՐԱՆՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /հետագայում՝ ընկերություն/ սեփականության իրավունքով պատկանող 08-073-0118-0014 կադաստրային ծածկագրով 0.2 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի հողամասը /վկայական՝ N 27012021-08-0009/ փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության

օբյեկտների հողերի կատեգորիա, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակություն՝ այդ հողամասում սպանդանոց կառուցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյանին՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունել որոշում՝ ընկերության կողմից տվյալ հողամասում կառուցապատում իրականացնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու վերաբերյալ:

2) Սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունն արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

4. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Զորակապ բնակավայրի տարածքում գտնվող <<ՖՐԱՆՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող 1.2 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին>> թիվ 104 որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ... 9	Դեմ՝ ... 0	Ձեռնպահ՝ ... 1
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ			
Ա. ԱՐՄԵՆՅԱՆ			
Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ			
Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ			
Մ. ՂԱԶԱՐՅԱՆ			
Գ. ՂԶՐՈՅԱՆ			
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ			
Ա. ՆԱԶԱՐՅԱՆ			
Ա. ՆԻԿՈՅԱՆ			
Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ			
Վ. ՍԱՀԱԿՅԱՆ			
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ			
Զ. ՍԱՐԳՍՅԱՆ			
Ա. ՎԱՐՈՍՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի ապրիլի 05
Քաղաք Մարալիկ